

Նարեկ Գալստյան

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ

Արդի գլոբալ գործընթացները և պետության գործառույթների փոփոխությունը

Գլոբալացման և դրա հիմքում ընկած գլոբալ գործընթացների հիմնահարցը հանդիսանում է ներկայումս տարբեր գիտական շրջանակներում լայնորեն քննարկվող, բայց, միաժամանակ, ամենաքիչ ուսումնասիրված հիմնահարցերից մեկը: Իրենից մեծ հետաքրքրություն է ներկայացնում հատկապես դրա տեսանկյուններից մեկը՝ գլոբալացման ազդեցությունը քաղաքականության վրա: Այստեղ գլոբալացումը հիմնականում ազդում է պետության միջոցով և էապես տարբերվում սոցիալ-տնտեսական գլոբալացումից: Առաջինում միասնության մակարդակը զգալիորեն ցածր է: Պետությունը նշանակալիորեն պահպանում է իր ինքնուրույնությունը, որի պատճառով այս առմամբ հաճախ օգտագործվում է «միջազգայնացում» տերմինը, ինչը նշանակում է, նախևառաջ, պետությունների քաղաքական և իրավական համակարգերի մերձեցում, նրանց փոխգործակցության, փոխազդեցության խորացում և այլն¹:

Պետությունների փոխկապվածությունն ունի ազգային և միջազգային տեսանկյուններ: Առաջինը թելադրվում է պետության արդի ներքին պահանջմունքների բավարարման անհրաժեշտությամբ, իսկ մյուսի էությունը նրանում է, որ պետությունների միջև նման հարաբերություններ հաստատվում են նրանց ընդհանուր շահերի ապահովման անհրաժեշտության արդյունքում:

Այստեղ հարկ է անդրադառնալ պետության գործառույթների հիմնահարցին: Քաղաքագիտական գրականության մեջ ընդունված է պետության գործառույթությունը բաժանել ներքին և արտաքին ուղղությունների: Պետության ներքին գործառույթների թվին են դասվում իրավակարգի պահպանումը, տնտեսվարումը, գաղափարախոսականը և սոցիալականը, իսկ արտաքին գործառույթներից են համաշխարհային քաղաքականության տարբեր սուբյեկտների հետ հարաբերությունները, արտաքին տրնտեսական և ռազմական գործառույթները²:

¹ Տե՛ս Լուկասուկ Ի. Ի. Глобализация , государство, право, XXI век. – М.: Спарк, 2000, с. 3:

² Տե՛ս, օրինակ, Категории политической науки. Учебник. – М.: Московский государственный институт международных отношений (Университет); “Российская политическая энциклопедия” (РОССПЭН), 2002 с.273-275:

Պետության գործունեության միջազգայնացումն այսօր հիմնականում որոշվում է հասարակական կյանքի տարբեր ոլորտների գլոբալացմամբ, որտեղ առաջին պլան են մղվում անվտանգության շահերը: Այսօր պետությունները կարող են հուսալիորեն ապահովել իրենց անվտանգությունը միայն համատեղ ջանքերով: Ոչ մի պետություն չի կարող իրականացնել իր անվտանգության ապահովման գործառույթները մեկուսի, առանց գործակցելու այլ պետությունների հետ: Թե՛ մեկուսացումը, թե՛ արտաքին կապերի թերզարգացածությունը վնասում են երկրի ազգային շահերին:

Գլոբալացումն ազդում է պետության բնույթի և գործառույթների վրա: Այս առմամբ հարկ է անդրադառնալ գլոբալացման պայմաններում պետության դերի և նշանակության հարցի վերաբերյալ տարբեր գիտական հոսանքների մոտեցումներին: Այսպես,

- *հեղափոխական* մոտեցման կողմնակիցները պնդում են, որ գլոբալացումը հանդիսանում է մարդկության պատմության նոր դարաշրջան, որտեղ ավանդական ազգային պետությունը կորցնում է իր ինքնությունը, որպես գործընկեր բիզնեսի ոլորտում դառնում անպիտան: Կարևորագույն որոշումներն այդուհետ ընդունվելու են անդրազգային ընկերությունների (ԱԱԸ) կողմից, որոնք այդ հարցում համագործակցելու են տարածաշրջանային կառավարությունների հետ:
- *Էվոլյուցիոն* մոտեցումը չի կանխորոշում համաշխարհային միասնական հանրության և միասնական համաշխարհային պետության կազմավորում: Այս մոտեցման կողմնակիցները գտնում են, որ ինքնիշխան պետությունները կպահպանեն իրենց լիիրավ իշխանությունը սեփական տարածքներում, սակայն ազգային ինքնիշխանությանը զուգահեռ կընդլայնվի միջազգային կազմակերպությունների ազդեցության գոտին: Աշխարհակարգն այսօր այլևս չի պտտվում ինքնիշխան պետության առանցքի շուրջ: Դա ստիպում է այդ պետությունների կառավարություններին մշակել նոր ռազմավարություն նոր աշխարհում¹:

Այս երկու մոտեցումների կողմնակիցները գտնում են, որ գլոբալ գործընթացներն ազգային պետությանը կհասցնեն մահացու հարված և պետությունն այլևս չի լինի գերիշխող ուժ միջազգային թատերաբեմում: ԱԱԸ ազդեցությամբ պայմանավորված աշխարհակարգը կհանդիսանա անցում ինքնիշխան տարածքային պետություններից դեպի «համաշխարհային գյուղի»: Տնտեսական գլոբալացմանը զուգահեռ կընթանա քաղաքականը, որն էլ կհանգեցնի համաշխարհային կառավարության ստեղծման:

- *Սկեպտիկական* մոտեցման հետևորդներն ընդգծում են, որ գլոբալացման պայմաններում ժամանակակից հզոր պետությունները կկարողանան պահպանել

¹ Տե՛ս Уткин А. И., Мировой порядок XXI века. – М.: Издатель Соловьев; Алгоритм, 2001 – (Россия и мир: итоги XX века, вып. 3), с. 47-50:

սեփական ուժային և տնտեսական ռեսուրսները: Աշխարհի տնտեսական զարգացումը կորոշվի պետությունների ազգային քաղաքականությամբ, այլ ոչ թե գլոբալացման «անտեսանելի ձեռքով»: Մարդկության պատմության ընթացքում հենց պետությունների նպատակամղված գործողություններն են ձևավորել և ձևավորում տնտեսաքաղաքական բլոկները, միություններն ու ընկերությունները: Եվ չարժե գերագնահատել ԱԱԸ ինքնուրույնությունը, քանզի կարելի է հեշտությամբ ասել, թե որտեղ է գտնվում այս կամ այն ընկերության կենտրոնական գրասենյակը, ում է նա հարկեր վճարում, որ պետության դրոշմ է ողջունում և որ կառավարությունն է համարում իրենը: Բացի այդ, ազգային ինքնության նըշանակության հապճեպ, չմտածված իջեցումը և ոչնչացումը կարող են հանգեցնել լայնածավալ ապակայունացնող գործընթացների պետությունների ներսում և ողջ աշխարհում¹:

Այսպիսով, գիտական շրջանակներում չկա միակարծություն պետության վրա գլոբալ գործընթացների ազդեցության և ապագայում պետության դերի հարցերում: Ակնհայտ է, որ, ինչպես պնդում են որոշ հեղինակներ, ավանդական ազգային պետության ավանդական տիպը այլևս չի կարող գնալ ժամանակին համընթաց: Այդ պետությունը, համաշխարհային քաղաքականության համակարգում օգտվելով ինքնիշխանության իրավունքից, երբեմն հարկ չի համարում ընդունել վերազգային ինստիտուտի գոյությունը և չի ցանկանում հաշվի նստել ազգային մակարդակում առկա և գլոբալ հետևանքներ ունեցող խնդիրները կարգավորելու անհրաժեշտության հետ:

Ազգային պետության թերություններն ու ճկունության պակասը լրացնելու միջոց համարվում է միջպետական կոալիցիաների ստեղծումը, որոնք հաճախ ավելի ճկուն են գտնվում, քան տարածաշրջանային միությունները: Ի վերջո խնդիրը հանգեցվում է մասնագիտացված աստիճանակարգված համաշխարհային համակարգի ստեղծմանը՝ բաղկացած համեմատաբար ինքնուրույն, բայց փոխկապակցված տարրերից²:

Այդուհանդերձ քաղաքականության մակարդակներից միայն մեկն ունի և դեռ երկար ժամանակ կունենա առավել կարևոր նշանակություն: Առայժմ ազգային պետությունն այլընտրանք չունի, ավելին, գլոբալացման պայմաններում այն ստանում է լրացուցիչ նշանակություն՝ որպես ռազմավարական միջնորդ ատյան քաղաքականությանը ներկայացվող հակասական պահանջների միջև:

Գլոբալ գործընթացները սերտորեն կապված են գլոբալ հիմնախնդիրների հետ: Ներկայումս փորձեր են արվում համակարգել արդի գլոբալ հիմնախնդիրներն ու դրանք

¹ ի Պ. Ե. Уткин А. И., Мировой порядок XXI века, с. 50-55:

² ի Պ. Ե. А. Печчеи в Политология: хрестоматия/ сост. проф. М. А. Василик, доц. М. С. Вершинин. – М.: Гардарики, 1999, с. 778-779:

հաղթահարելու գործում ազգային պետությունների գործունեության կողմնորոշիչները, ինչպես, օրինակ, հետևյալ համակարգումը.

- կայուն տնտեսական զարգացման ուղիներ գտնելը,
- պատերազմի և խաղաղության, միջազգային անվտանգության ապահովման խնդիրները,
- բնապահպանական հիմնախնդիրները,
- տնտեսական և մշակութային ետամնացության, աղքատության հաղթահարումը զարգացող երկրներում,
- մարդու իրավունքների ոտնահարման հիմնախնդիրը,
- պայքարը միջազգային հանցագործության և ահաբեկչության դեմ և այլն¹:
Ոմանք փորձ են անում գլոբալ հիմնախնդիրները միավորել մի քանի խմբերում.
- Միջազգային սոցիալ-քաղաքական խնդիրներ՝ միջուկային պատերազմի կանխումը, սպառնազինությունների մրցավազքի թուլացումը, տարածաշրջանային, միջպետական հակամարտությունների կարգավորումը:
- Միջազգային սոցիալ-տնտեսական և բնապահպանական խնդիրներ՝ թույլ զարգացվածության, աղքատության ու մշակութային ետամնացության հաղթահարումը, էներգետիկ, հումքային և պարենային ճգնաժամերի լուծումը, ժողովրդագրական իրավիճակի օպտիմալացումը, խաղաղ նպատակներով տիեզերական տարածության և Համաշխարհային օվկիանոսի յուրացումը, էկոլոգիական անվտանգության ապահովումը:
- Մարդու խնդիրները՝ մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների պահպանումը, մարդու գոյատևման անհրաժեշտ կենսապայմանների ապահովումը, հասարակական հարաբերությունների ժողովրդավարացումը, մշակույթի զարգացումը, մշակութային ժառանգության պահպանումը և այլն²:

Այդ հիմնախնդիրների լուծումը պահանջում է միջազգային համագործակցության անհրաժեշտության ընդունում: Ավելին, որևէ մի պետության կամ պետությունների խմբի թելադրանքով գլոբալ հիմնախնդիրների լուծումն անհնար է: Հնարավոր է միայն գլոբալ գործընթացների օգտագործում այդ պետության կամ պետությունների խմբի շահերին համապատասխան:

Գլոբալացումը դիտարկվում է նաև որպես մարտահրավեր պետությունների ազգային ինքնությանը: Առաջ է գալիս ինքնության ճգնաժամ, որը երբեմն փորձում են հաղթահարել

¹ Տե՛ս В.А. Мальцев. Основы политологии. М., 1997, с. 462:

² Տե՛ս Ю.В. Ирхин, В.Д. Зотов: Политология, "Юрист", 1999, с. 444:

տարատեսակ տարածաշրջանային, մշակութային, սոցիալ-տնտեսական կազմավորումների ձևավորմամբ: Տարածաշրջանային ինտեգրացիան ավելի է հեշտացնում ընդհանուր խաղի կանոնների մշակումը՝ հաշվի առնելով տվյալ տարածաշրջանի երկրների մշակութային ավանդույթների և տնտեսական զարգացման նմանությունները¹:

Միաժամանակ անհրաժեշտ է միշտ հաշվի առնել, որ գլոբալացմանը զուգահեռ զարգանում է նաև ֆրագմենտացման գործընթաց, որի արդյունքում աշխարհի քաղաքական քարտեզի վրա հայտնվում են նոր պետություններ և պետական կազմավորումներ:

Գլոբալացման ժամանակակից փուլը բնութագրվում է նաև գլոբալ զարգացման մեջ ԱԱԸ դերակատարության աճով: Այդ ընկերությունները գնալով կորցնում են իրենց քաղաքացիական պատասխանատվությունը պետության առջև: Պետությունների տնտեսական քաղաքականությունը մեծապես կախման մեջ է ընկնում համաշխարհային շուկայի ուժգնացող ազդեցությունից: Բացի այդ, տարատեսակ ոչ կառավարական կազմակերպություններ աճող ազդեցություն են գործում հասարակական կարծիքի, քաղաքականության և օրենքների մշակման վրա, իրենք են իրականացնում սոցիալական պաշտպանության որոշ գործառնություններ: Սակայն, թեև խոշոր տնտեսական և ֆինանսական կառույցների համար գլոբալ մրցակցությունը հանում համաշխարհային կապիտալի դառնում է էլ ավելի կոշտ, միջազգային ասպարեզում նրանց համար ճանապարհ կարող է և պետք է հարթի պետությունը:

Գլոբալացման գործընթացները փոքրացնում են ազգային կառավարությունների իշխանությունը երկրի ներսում և միջազգային ասպարեզում: Տեղի է ունենում առանձին պետությունների ներքին ինքնիշխանության թուլացում²: Սակայն դա դեռևս չի նշանակում պետական հսկողության կորուստ: Այդպիսի հսկողության մասշտաբներն ու արդյունավետությունը կախված է դրանից, թե ինչ ուղի կորդեգրի կառավարությունը՝ մենաշնորհի կորուստ – հսկողության կորուստ – ինքնիշխանության կորուստ կամ մենաշնորհի կորուստ – հսկողության պահպանում:

Գլոբալացումը նպաստում է պետության ներքին ու արտաքին քաղաքականության միջև սահմանների թափանցիկացմանը, բարդացնում արտաքին քաղաքականության իրականացումն ու փոփոխում դրա բովանդակությունը: Այն գնալով ավելի քիչ է որոշվում միակողմանի ազգային շահերով և «իրական քաղաքականության» (“Realpolitik”) ոգով, երբ գլխավոր նպատակներ են հանդիսանում ազդեցության պահպանումն ու ընդլայնումը, ուժերի հավասարակշռության պահպանումը և այլն: Ազգային շահերի պաշտպանության սկզբունքը

¹ Տե՛ս Klaus Müller, Globalisierung, Campus Verlag GmbH, Frankfurt/ Main, 2002, S. 38-40:

² Ի՛նչ Wehner, Burkhard: Die Logik der Politik und das Elend der Ökonomie: Grundelemente einer neuen Staats- und Gesellschaftstheorie. – Darmstadt, Wiss. Buchges., 1995, S. 212-213:

կենթարկվի արմատական փոփոխությունների և կսկսեն մշակվել առավել հեռատեսական արտաքին քաղաքական ծրագրեր, որոնց հիմքում ընկած կլինի ազգային և ընդհանուր շահերի համաձայնեցման անհրաժեշտությունը: Դրա բովանդակության մեջ այսօր ներխուժում են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են պայքարը կազմակերպված հանցագործության և ահաբեկչության դեմ, միգրացիան, ֆինանսական հոսքերի հսկողությունը, շրջակա միջավայրի պահպանությունը և այլն, որոնց լուծումն անհնար է առանց միջազգային համագործակցության:

Գլոբալացումը փոփոխում է նաև քաղաքական որոշումների ընդունման համակարգը: Ազգային մակարդակը մնում է կարևորագույնը, քանզի դրանում առկա են բավարար իրավական մեխանիզմներ խնդիրների ամենալայն շրջանակի լուծման համար: Սակայն եթե քաղաքական նպատակներն առանձին պետությունների շրջանակներում դառնում են անհասանելի, ապա դրանք պետք է տեղափոխվեն տարածաշրջանային և միջազգային մակարդակներ:

Որոշումների ընդունման ժամանակ պետությունն առավել հաճախ է հենվում մասնավոր և ոչ կառավարական սեկտորի փորձաքննությունների վրա, քանզի այդ կառույցները մի շարք հարցերում տնօրինում են ավելի շատ ինֆորմացիայի, քան պետական կառույցները:

Ձևափոխվում է նաև պետության անվտանգության քաղաքականության բովանդակությունը: Մեծանում է «փափուկ անվտանգության» հետ կապված խընդիրների դերը: «Կոշտ անվտանգության» հարցերը պահպանում են իրենց նշանակությունը՝ միաժամանակ պետությունների ռազմական հակամարտության հարթությունից տեղափոխվելով բարձր տեխնոլոգիաների ոլորտում մրցակցության դաշտ:

Գլոբալացվող աշխարհում զինված ուժերի ինստիտուտը գնալով վերածվում է համաշխարհային քաղաքականության առավել նշանակալի տարրի: Այսօր առավել ակնհայտ է դառնում նաև ռազմական կառույցների գործառույթների գլոբալացումը: Գլոբալ գործընթացները թափանցիկ են դարձնում սահմաններն ազգային պետությունների միջև, ինչն օրակարգի հարց է դարձնում ժամանակակից բանակի որոշ գործառույթների փոփոխությունը: Եթե XX դարն ազգային սահմանների պաշտպան բանակի դարն էր, ապա XXI դարը նոր բանակի դարն է, որի գործառույթն արդեն ոչ միայն առանձին պետությունների սահմանների պաշտպանությունն է, այլև նոր գլոբալ սպառնալիքներից ողջ համաշխարհային հանրության պաշտպանությունը:

Ահաբեկչական գործողությունները դարձան շրջադարձային պահ այն իմաստով, որ դրանք կանխորոշեցին աշխարհում ռազմականացման նոր ակիք: Բանակն այսօր մեծամասամբ հանդիսանում է մի շարք պետությունների արտաքին խընդիրների

իրականացման գործիք, իսկ ռազմական միջամտությունը գլոբալ աշխարհում ևս շարունակում է և կշարունակի մնալ իրողություն:

Գլոբալացման պայմաններում ազգային պետության և նրա դերակատարության հիմնահարցի հետ կապված շրջանառվում են նաև այսպես կոչված «գլոբալ կառավարման համակարգի» հայեցակարգերը, որոնցից են՝

1. *համաշխարհային կառավարության* հայեցակարգը, որտեղ խոսքը գնում է ազգային պետության մեծացված մոդելի մասին, որը գլոբալ մասշտաբով զբաղվում է նրանով, ինչով կառավարությունները՝ առանձին պետությունների ներսում: Այս կոնցեպցիան համարվում է ծայրահեղ մարզինալ, քանզի ոչ մի համաշխարհային կառավարություն չէր ունենա բավարար լեգիտիմություն,
2. *գլոբալ զարգացման քաղաքական ղեկավարման* հայեցակարգը, ըստ որի այդ ղեկավարումն իրականացվում է որևէ գերիշխող պետության կամ մեծ կառույցներում միավորված խոշոր պետությունների խմբի կողմից: Այս կոնցեպցիան արդեն ակտիվորեն փորձում են իրականացնել գործնականում, սակայն դա անխուսափելիորեն կհանդիպի այն պետությունների հակազդեցությանը, որոնք չեն պատկանում մեծ պետությունների ակումբին, և նրանց, ովքեր չեն ցանկանում կիսել իրենց արտոնյալ կարգավիճակն այլոց հետ,
3. *գործակցային գլոբալ կառավարման* հայեցակարգը, որն առաջարկում է ազգային կառավարությունների միջև որոշումների և փոխհամաձայնության փնտրման հավաքական գործընթաց, որին մասնակցում են նաև մասնավոր ակտորները: Այստեղ կառավարությունները պահպանում են քաղաքական որոշումներ մշակելու և իրականացնելու մենաշնորհը, բայց ոչ պետական մասնակիցները մեծ դեր են խաղում խնդիրների որոշման, փոխկապվածությունների վերլուծության և անմիջական իրականացման փուլերում,
4. *ՄԱԿ բարեփոխման* հայեցակարգը, ըստ որի ՄԱԿ Անվտանգության Խորհուրդը վերածվում է կեղծ կառավարության, իսկ Գլխավոր Ասամբլեան՝ կեղծ խորհրդարանի: ՄԱԿ-ը ներկայացվում է որպես չափազանց կենտրոնամետ նպատակներով կազմակերպություն, որը ղեկավարվում է ընտրյալ պետությունների կողմից, իսկ նրան գլոբալ կառավարման գործում կենտրոնական դեր տալն առաջ է բերում մասնավոր ակտորների նշանակության թերազնահատման վտանգ¹:

Այժմ փորձենք ընդհանրացնել վերն ասվածը և հստակեցնել գլոբալացման պայմաններում պետության դերակատարության հիմնահարցը.

¹ St' u Klaus Müller, Globalisierung, S. 79-86, 130 – 133:

- Պետության և նրա ինստիտուտների ամրապնդումը գլոբալացման պայմաններում ներկայանում են որպես պետության և ազգի գոյատևման ու զարգացման անհրաժեշտ պայման: Պետությունը, որպես այդպիսին, չի մահանում: Ընդհակառակը, այն պետք է ստանձնի այդ գործընթացներին մասնակցության ռազմավարական գործառույթ,
 - Տնտեսական ինտեգրացիայի նոր փուլը և վերազգային կազմավորումների, միջազգային կազմակերպությունների գործունեությունը մարտահրավեր են նետում պատմականորեն ձևավորված ազգային պետություններին ու պետության մասին XX դ.-ում սովորական դարձած պատկերացումներին: Գլոբալ գործընթացների արդյունքում պետության և ազգի առջև ի հայտ եկած սպառնալիքներն ունեն հետևյալ բաղկացուցիչները.
1. Տեղի է ունենում քաղաքականության «տնտեսականացում»: Ներքին քաղաքականության ոլորտում նորմալ, ոչ ճգնաժամային իրավիճակներում «տնտեսական բլոկը» մղվում է առաջին պլան: Արտաքին քաղաքականության ոլորտում «ուժերի հավասարակշռության» նախկին աշխարհաքաղաքական սխեմաները մեծամասամբ կորցնում են իրենց ուժը: Ռազմական հզորության և քաղաքական ազդեցության կարևորության մասին ավանդական պատկերացումները պահպանվում են, սակայն այդ գործոններն ինքնին արդեն բավարար չեն համաշխարհային վերնախավին պատկանելիությունը երաշխավորելու համար:
 2. Այն հանգամանքը, որ տնտեսական գործընթացները ստանում են գլոբալ բնույթ, փոփոխում են արտաքին և ներքին քաղաքականության միջև սահմաններն ու դրանց հարաբերակցությունը: Ազգային պետությունների մեծ մասի համար գլոբալացումը կտրուկ սահմանափակում է այդ գործընթացների կարգավորմանը նրանց մասնակցության հնարավորությունները: Տնտեսության իրական կառավարման լծակները գնալով ավելի են կենտրոնանում ԱԱԸ-ի, միջազգային և ազգային կազմակերպությունների, տնտեսապես առավել հզոր երկրների կառավարությունների ձեռքում:
 3. Պետությունը երբեմն հրաժարվում է իր նախկին գործառույթների մի մասից հոգուտ քաղաքացիական հասարակության:
 - Ժամանակակից ՉԼՄ-ները ստեղծում են այսպես կոչված «CNN-ի էֆեկտ», երբ իրադարձությունները ՉԼՄ-ների միջոցով ձևավորում են հասարակական կարծիք՝ միաժամանակ մեծացնելով որոշում ընդունող կենտրոնների վրա ազդեցության հնարավորությունները:

- Հեռահաղորդակցության գլոբալ համակարգը երկրորդային, անգամ՝ երրորդային է դարձնում պետության դերն ինֆորմացիոն դաշտում, գործնականում անհնարին դարձնում ինֆորմացիոն հոսքերի նկատմամբ կառավարական արդյունավետ հսկողությունը, իսկ նորագույն տեխնոլոգիաները ներխուժում են ազգային քաղաքականություն՝ երբեմն վտանգելով պետության միջազգային հեղինակությունը:
- Ինֆորմացիոն գործընթացները ստեղծել են արտաքին քաղաքական ազդեցության սկզբունքորեն նոր գործիքներ: Ինֆորմացիոն պաշարներն իրենց արդյունավետությամբ շատ հաճախ գերազանցում են մյուս գործիքներին: Այսօր ազգային շահերի պաշտպանությունն անհնար է առանց պետության ինֆորմացիոն անվտանգության ապահովման, ազդեցության ինֆորմացիոն պաշարի ստեղծման, որն ունակ կլինի անհրաժեշտության դեպքում դիմակայել «ինֆորմացիոն ագրեսիային»:

Թեև գլոբալացման զարգացման պայմաններում պետությանն ունի որոշակիորեն պասիվ դերակատարություն, սակայն հարկ է ընդունել, որ պետությունը միշտ հանդիսացել է խոշոր հիմնահարցերի լուծման կամ առաջադրման ամենաարդյունավետ գործիքը: Ազգային պետությունն այսօր էլ պահպանում է իր ինքնության հիմնական գծերը: Այժմ դրանք նորովի են իմաստավորվում և ձևակերպվում՝ հաշվի առնելով արդի իրողություններն ու արդյունավետ կառավարման պահանջները: Պետությունը միշտ առաջնահերթություն կունենա այնպիսի հարցերի որոշման ժամանակ, ինչպիսիք են իրավակարգի և պաշտպանունակության ապահովումը, բնական պաշարների օգտագործումը, միգրացիայի հսկողությունը և այլն:

Գլոբալացման պայմաններում տարբեր երկրների ռազմավարությունը տարբեր է: Ովքեր գլոբալացումը դիտարկում են որպես սպառնալիք, ցուցաբերում են պաշտպանական ռեակցիա՝ ներդնում են տնտեսական հովանավորչության միջոցներ, ազգային օրենսդրությամբ փորձում պաշտպանվել գլոբալ գործընթացներից, վարում մեկուսացման քաղաքականություն և այլն: Նման քաղաքականությունը կարող է հանգեցնել բարեկեցության նվազման, տնտեսական և տեխնոլոգիական ետամնացության: Այլ պետություններ հանդես են գալիս հօգուտ մրցունակության, տնտեսական և ներդրումային ակտիվ քաղաքականության՝ անգամ դիմելով ագրեսիվ արտաքին տնտեսական քաղաքականության, ինչն իր հերթին տանում է դեպի պետության գործունակության նվազման, պատճառ դառնում պատասխան տնտեսական հովանավորչական կամ ազգային խտրականության քաղաքականության:

Կարելի է առնձնացնել իրար չբացառող երեք ռազմավարություններ, որոնք հնարավորություն կտան ազգային պետությանը հարմարվել գլոբալացմանը և դիմակայել նրա մարտահրավերներին:

1. Պետության դուրս գալն այնպիսի ոլորտներից, ուր նրա միջամտությունը սկզբունքորեն չի պահանջվում: Դա կհեշտացնի պետության գործունեությունը և հնարավորություն կտա նրան ավելի վճռական գործել քաղաքականության հիմնական ոլորտներում: Այս ռազմավարության տարրերից է քաղաքական որոշ լիազորությունների փոխանցումը քաղաքականության ենթադաս կամ վերադաս մակարդակներ:
2. Պաշտոնական կամ ոչ պաշտոնական համագործակցությունը, որի միջոցով պետությունները կարող են միավորել իրենց ռեսուրսները և մեծացնել իրենց հնարավորություններն ապագայի կառուցման գործում: Այդպիսի համագործակցության ձևերը բազմաթիվ են՝ սկսած կոնկրետ խնդիրների շուրջ պետությունների ոչ պաշտոնական համագործակցությունից մինչև համագործակցությունը միջազգային կազմակերպությունների շրջանակներում, որոնք չեն ենթադրում հրաժարում ազգային պետության ավանդական ինքնիշխանությունից:
3. Պետության ինքնիշխանության մասնակի փոխանցումը վերազգային ինստիտուտներին, որի առավել զարգացած և դեռևս չզերագանցված մոդելը Եվրոպական Միությունն է: Այստեղ ևս ազգային պետությունը մնում է կենտրոնական քաղաքական ատյանը, քանզի կարևորագույն քաղաքական որոշումներն ընդունվում են կառավարությունների համագործակցության կամ հակադրության պայմաններում:

Սակայն հենց միջազգային քաղաքական համակարգն ինքը բաղկացած է քիչ գործողությունների պատրաստ ազգային պետություններից, որոնք պետք է դիմակայեն գլոբալ գործընթացների մարտահրավերներին: Այդ դիմակայության համար կարող են պայմաններ ստեղծել վերոնշյալ երեք ռազմավարությունները, որոնք, սակայն, ենթադրում են առավել ինտերնացիոնալիստական արտաքին քաղաքականություն և, առաջին հերթին, հրաժարում ինքնիշխանության ավանդական պատկերացումներից և XXI դարի պետության մասին նոր պատկերացումների ձևավորում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Лукашук И. И. Глобализация, государство, право, XXI век. – М.: Спарк, 2000
2. Категории политической науки. Учебник. – М.: Московский государственный институт международных отношений (Университет); “Российская политическая энциклопедия” (РОССПЭН), 2002
3. Уткин А. И., Мировой порядок XXI века. – М.: Издатель Соловьев; Алгоритм, 2001 – (Россия и мир: итоги XX века, вып. 3)

4. Политология: хрестоматия / сост. проф. М. А. Василик, доц М. С. Вершинин. – М.: Гардарики, 1999
5. В.А. Мальцев. Основы политологии. М., 1997
6. Ю.В. Ирхин, В.Д. Зотов: Политология, "Юрист", 1999
7. Klaus Müller, Globalisierung, Campus Verlag GmbH, Frankfurt/ Main, 2002
8. Wehner, Burkhard: Die Logik der Politik und das Elend der Ökonomie: Grundelemente einer neuen Staats- und Gesellschaftstheorie. – Darmstadt, Wiss. Buchges., 1995